

խեղճութեան ժայռի դէմ մեր զոյւթիւնն ամէն բոպէ խորտակել սպառնում—ի՞նչ աւելի ապահով նեցուկի աւելի յուսատու մի հանգամանք մեզ համար քան այն զգացումը թէ մօտ է Վա օրի արարչական ձայնին և՛ ծով և՛ հողմ հնազանդ են և որ քայլում է և առիւծարար մռնչող կատարի ալիքները մի վայրկեանում լռում և կծկուում խոնարհ գանձակներին նման Վորա ոռներին են փարում որ անխաղ ղեկավար է և խաղաղ նաւահանգիստ միանգամայն Լըժանի կ զգացումն . . . և երբ մէկն այդ զգացմամբ տողորուած, տողորուած իւր Տիրոջ և Փրկչի մօտ լինելու, Վորա շաղկով ընթանալու բուռն ցանկութեամբ արհամարհում է ամէն ինչ արհամարհում բնութեան օրէնքը և համարձակում ոտքը անդունդի վերայ դնել . . . այստեղ ևս յոյսը նորան չէ խաբում նա սոսկում է արդարեւ առաջին բոպէին և երբ շուրջն է նայում հողմ ու մրրիկ և մոլեգին յորձանքներ տեսնում իւր ղիմաց, երբ լոյծ ու մեղկ տարրը սահում է ոտքի տակից և դէպ իրեն ձգում նորան հողանիւթ զանգուածը բայց բաւական է որ աչքը կրկին դէպի Փրկիչը դարձնէ՝ դէպի ալիքների վերայ շրջող Յիսուս, և բացականչի ի խորոց սրտի. «Տէր, փրկեա՛ զիս» և ահա մեկնում է Վա Իւր ազատարար ձեռքը, ոտքի կանգնեցնում ընկղմեալին և ալիքների վերայ շրջել սովորեցնում:

Այ՛ անհուն մխիթարութեան և խրախուսիչ յուսոյ աղբիւր է ամէն քրիստոնէի՝ ամէն մի տաճնապալից հոգու համար ս. աւետարանի այս հատուածը, ծովի և փոթորկի վերայ իշխող Տիրոջ այս հրաշալի պատկերը բայց այսօր օրհասական այս պահուն այդ մխիթարութեանն ու խրախուսին ամէնից աւելի պէտք ունին Հայաստանեայց ս. եկեղեցու վտանգեալ նաւի բնակիչները: Աւա՛ղ, քանի՜ դար արդէն այդ նաւը մեկնեալ է ի ցամաքէն թաղում՝ ասպարիսօք՝ ծփեալ յալեացն քանի՜ սաստիկութեամբ նորա դէմն են շնչում այժմ հակառակ հողմեր, հողմեր մարդկային վայրենի կրքի, եսական չար դիտումների հեգ-

նութեան դառն ծիծաղի ու պատանեկան անմիտ ցնորքների. և նաւի վերայ եղողները յուսահատ այս կողմ՝ այն կողմ են ընկնում նա յում են անհանգիստ դէպի արեւելք, դէպի արեւմուտք, արդեօք կ'այտնուի՞ մի ամրակուռ նաւատորմից փրկելու նոցա վերահաս վտանգից արդեօք մօտ է ցամաքը և կ'այտնուի մէկը որ այդ քայքայեալ, անզկի, անպաշտպան նաւը խոչ ու խութերի միջով դէպի այնտեղ առաջնորդէ:

Անհղանի է սակայն նաւի խեղճան Տէրը, խալառ բացակայել Վա չէ կարող, և դաւիս է ահա յաղթական ընթացքով խռովալոյ ալիքների վերայ. առաջօք մի երկոյթ չէ դա այլ նոյն ինքն Պրիգորի մեծ Լստուածը, «Քաջալերեցարուք, ես եմ մի երկնիք» ձայնում է Վա ամէնքին և մեղմութեամբ յանգիմանում նոցա որոնք ջրասոյգ ընկղմելու վտանգի մէջ են համարում իրենց. «Թերահաւատ, ընդէ՛ր երկմտեցեր»:

«Ի նեղութեան իմում ես առ Տէր կարգացի և Վա լուաւ ինձ յանդորր»:

«Տէր է իմ օգնական, և ես ո՛չ երկեայց զի՛ արասցէ ինձ մարդ»:

«Կարի է յուսալ ի Տէր՝ քան յուսալ ի մարդիկ, բարի է յուսալ ի Տէր՝ քան յուսալ յիշխանս»:

Կ. Վ.



ԱԳՕԹԲԸ ՏՏՏԻՈՒԹԻՒՆ ՓԱՐԱՏԵԼՈՒ ԴԵՂ Է.

«Եւ էր ի տաճնապի եւ մտադիւրութեամբ եւս կայր յաղթս»:
Ղուկ. ԻԲ. 45:

Խորհրդաւոր ընթերից յետոյ, երբ վերջին աղօթքը կարգացուեցաւ, Տէրն և Իւր առաքեալներն, որոնց մէջը չէր միայն չարաւորդ մտանիւր, դուռ ելան քաղաքի դռներից և Կեղբանի ձորն իջնելով՝ զիմեցին դէպի ջիթենեաց պարտիզի կանաչ զաւիպայր, որ նորա ետեւի կողմն էր գտնուում: Հոն գիտաւոր և տխուր էր նոցա այս փերջին միաբան գնացքը. խորհրդաւոր երկիւղի ծանր վիշտը կապարի նման ծանրացել էր այդ մի բուռն խեղճ գալիւլիցիների սրտի վերայ, երբ

նորաւ երբեմն միայն ընդհատելով արեւելեան գիշերուայ խորին լուսթիւնը՝ հինաւորաց Ձիթենեաց մութ ստուերներէ ներքոյ, զատկական լուսնի շողշողուն լուսով հեռւումէին Նորան իրենց Տիրոջն և Աստուծուն որ գլուխը խոնարհած, վշտարեկ սրտով գնում էր նոցա առաջից գէպի կամուրջ չարչարանք։

Այդ գիշեր նորա՝ սովորականի նման բեթամիա չմերադարձան, այլ մնացին իրենց ծանօթ Գեթսեմանի (Ձիթահանքի) այգում։ Գիտէր Յիսուս, որ մօտ էր իւր անսահման խոնարհութեան ժամը, և այդ րոպէից սկսած՝ մինչև որ վերջին բարձրաբարառ աղաղակը Նորա սիրտը կխորտակէր, Նորա համար միայն մի բան էր մնում — ճաշակել տանջանքի այն բոլոր դառնութիւնը և հոգու բոլոր այն կիզող անձուկը, որ մարդ տանել կարող է. տանջանք և անձուկ, որոնց ներքոյ Նորա աստուածային հոգին ևս չիւր վսեմագոյն լուսեղէն յատկութեամբ հանգերձ, ենթարկուում է կարճատեւ, բայց սոսկայի նսեմութեան։ Մինչև այդ ժամը մի գործ էր մնացել կատարելու. մի կարճ ժամանակ էր տրուած Նորան և այդ ժամանակում Նա պիտի զօրացնէր իւր մարմինը, ոյժ տար հոգուն, խողալէր իւր հոգին ազօթքով և առանձնութեամբ, քանի զեռ չարիքը և այն ամէներ, ինչոր չարի իշխանութեան ներքոյ է, իրենց բոլոր զօրութեամբ չէին թափուել Նորա անմեղ և ոտրը գլխի վերայ։ Նա հանգիպէր պէտք է այդ ժամին, պէտք է տանէր այդ յաղթութիւնն այնպէս, ինչպէս հանգիպել պէտք է բոլոր ամենամուռ ժամերին, ինչպէս բոլոր գծուարագոյն յաղթանակները տանել պէտք է — միայնակ։ Այ թէ կարեկցութիւն պէտք չէր նորան, ոչ իւրաքանչիւր վսեմ հոգի զգում է նորա կարեւորութիւնը և գուցէ ամենալսեմ հոգիները աւելի պէտք ունին նորան։ Թէև Նորա բարեկամները միայն քնում էին, երբ գործում էր մասնից, այնուամենայնիւ այդ մռայլ ժամուն ուրախութիւն էր նորա համար և այն, որ Նա զգում էր թէ նոքա մօտիկ են թէ մօտիկ են հէնց նոքա, որոնք ամենքից աւելի էին սիրում Նորան։ «Նստարուք այդքա՛ւ ասաց Նա աշակերտների այս փոքրիկ ժողովին. «մինչև երթայց կացից յազօթս», նոքա փաթաթուեցան իրենց վերարկուների մէջ և խառի վերայ պարկեցին քնելու, իսկ Նա վերըրեց իրեն հետ Պետրոսին, Յակոբոսին և Յովհաննէսին, ընտրեալներից ընտիրներին, և հեռացաւ նոցանից մի քարքնէց. բայց շուտով նոցա ներկայութիւնն անգամ անտա-

նելի գարձաւ Նորա համար, անպատմելի վիշտ, ուժից վեր տանջանք, մռայլ սոսկումն պաշարեցին Նորան և նախապէս ճաշակել տուին մահը։ Նա միայն, Աստուծոյ հետ միայն լինելու աւելի և աւելի կարիք էր ըզգում։ Նա հեռացրեց այն (աշակերտների) քնքոյշ կարեկցութիւնը, որ Նորան զօրացնել կարող էր և լուսնի լուսից անցաւ գէպի Ձիթենեաց այգու խիտ կողմերը, նորա ծառերի ստուերի տակ, առանձնական խօսակցութեան վայր ընտրելով իւր երկնաւոր Հօր հետ։ Եւ Նորա սիրելի առաքեալները, քանի զեռ չէին յաղթուել քնից, տեսնում էին թէ որքան ծանր էր Նորա տագնապը. Նոքա տեսնում էին Նորան մերթ ծնկաչոք, խոնարհած գլխով, մերթ երեսի վերայ տարածուած. և թէպէտ ապշութիւնն ու սարսափը պաշարեց նոցա և թուում էր, թէ այն անբողջ այգին լի էր բարի և չար ոգիներով, որոնք զօրեղ, անբարբառ կռիւ էին վարում յաւիտենական յաղթանակի համար, բայց նոքա զգում էին, որ անպատմելի տանջանքների վկայ են. քրտինքի կաթիլները, որ հոգեկան կակծից ելնում ծածկում էին Նորա ճակատը և վայր էին հոսում, մահուան այդ ծանր տագնապի միջոցին՝ նոցա աչքում արեան կաթիլներ էին երևում։ Այն ընդհատ ազօթքի վերջին խօսքը, որ Քրիստոս իւր երկնաւոր Հօրն ուղղեց, հեռեւալն էր. «Եթէ հնար է, բայց ոչ իմ կամք, այլ Քոյդ եղիցին»։

Ի՞նչ նշանակութիւն ունի մեզ համար, եղբայրներ, այս գէպքը, ի՞նչ էր այս կէս գիշերային ժամու սարսափը, միթէ կարծում էք, որ մահուան երկիւղն էր այդ, և միթէ այդ հերիք էր Մարգոյ Որդու անմեղ և անբիծ հոգին մինչև հիմք յուզելու։ Բայց միթէ պարզ չէ՝ երեխայի համար իսկ, թէ այդպիսի երկիւղը որքան անմիաբանելի է այն ամենի հետ, որ յետոյ տեղի ունեցաւ, այն հերոսական հաստատամտութեան հետ, որ տատանել չկարողացան անընդհատ տասն և հինգ ժամ տեւող չարչարանքները, այն վեհ լուսութեան հետ, որ վախեցրեց նոյն իսկ դաժան հռովմայեցուն և ստիպեց յարգանքով խոնարհել Նորա առաջ. հոգու այն ամենաբարձր և իշխանական զօրութեան հետ, որ զղջացող աւազակի առջև արքայութեան դռները բացեց և կարեկցաբար ներումն շնորհեց դաւաճան քահանայապետին։ Կարո՞ղ էր մահից վախենալ Նա, որի անունով, որի զօրութեամբ և որի համար միայն տարիների ծանրութեան ներքոյ ընկճուած ծերերը, թոյլ կոյսերն ու երկչոտ պատանիները զիմել են

մահուան՝ առանց սարսուռի, առանց հառա-
չանքի: Եղբայրներ, սոսկ պարզ մահուան
երկիւզը այնպիսի երկիւզ է, որին յաղթել
կարող են նոյն իսկ մարդկային մտքի մնու-
ցած ամենասուտը կրքերով, և շատ ծանր յան-
ցաւորներ դիմել են իրենց վախճանին հա-
մարձակ և անյողողոգէ: Եւ եթէ կար մէկը,
որ գիտէր թէ մահը նոյնքան բնական է, որ-
քան ծնունդը՝ այդ Յիսուս էր. Նա գիտէր,
թէ մահը աստուածաւէրների համար վե-
րածնութեան մեծ օրն է, այն երանաւէտ
քունն է, որ Աստուած է տալիս: Մահու
խայթոցը, նորա միակ խայթոցը՝ մեղքն է.
գերեզմանի յաղթանակը և միակ յաղթանա-
կը՝ ապականութիւնն է: Իսկ Յիսուս անմեղ
էր և ապականութիւն չտեսաւ: Ոչ, այն
որ արիւն քրտինք էր հոսեցնում, նորա դէմ-
քի վրայից, անհամեմատ աւելի սպանիչ էր
քան մահը: Թէ և ինքն անմեղ՝ Նա տանջ-
ուում էր մեղքի համար: Մարդու սոսկալի մե-
ղանշականութիւնը անտանելի ճնշմամբ ծան-
րանում էր նորա հոգու վերայ և Նա իւր
սուրբ շրթունքներով քամեց մինչև յատակը
այն դառն բաժակը, որի մէջ մեղքը լեցրել
էր իւր ամենամահառիթ թոյնը: Կատարեալ
անմեղութիւնը կարող էր միթէ առանց սար-
սուռի տանել այն ամէն գարշութիւնները,
որ ներկայացնում են մարդկային ապերախ-
տութիւնն ու չարութիւնը: Միթէ սոսկում
և սարսափ չէր պաշարի նորա կուրծքը: Որ
կատարեալ սէր էր, երբ տեսնում էր այդ
մարդոց, որ նորանն էին, որոնց համար Նա
աշխարհ էր եկել՝ անմիտ թշնամութեամբ
էին լեցուած գէպի անհուն մաքրութեան,
սիրոյ և խաղաղութեան աղբիւրը: Այդ կա-
մաւոր տանջանքը, այնուամենայնիւ տանջանք
էր, և մեղ համար եղած: Աստուծոյ Որդին
տանջուեց այն պատճառով, որ տանջանքի
միջոցով անսահման կարեկցութեան կատա-
րելութեանը հասնի՝ որպէս փրկիչ, որ կա-
րողն է տանջուի մեր տկարութեան համար:

Այժմ մենք չենք կարող կանգ առնել
և լիւրջ բացատրել այս արիւնալի սխրագոր-
ծութեան հետ կապուած տանջանքների խոր-
հորդաւոր նշանակութիւնը. բայց չենք կարող
մենք արգելք օգտակար կերպով ուշադիր
լինել, չէ կարող իւրաքանչիւր ոք, որի սէրն
ազատ է կրքի տենդային յուզումներից և են-
թակայ չէ հպարտութեան չնչին ձգտումնե-
րին: Այլ ընդունակ է հեղութեամբ և պատ-
կառանք անսալ աստուածային պատուիրան-
ներին, չենք կարող ասում եմ մենք բոլորս
միման սովորել այդ զարմանալի անցքի կըց-

կրտուր նկարագրից «Եւ էր ի տագնապի և
մտադիւրութեամբ ևս կայր յաղօթաւ Թող
թող տրուի ինձ մէկ կամ երկու խրատ հա-
նել նորանից այն մարդկանց համար, որոնք
լսելու ականջ ունին: Այս կարճ ասացում-
քը կարող է մեղ համար շատ մեծ նշանա-
կութիւն ունենալ... վաղ թէ ուշ ամէնքի
կեանքի համար պիտի հասնի Գեթսեմանիի
ժամը: Այդ կարող է լինել կռուի, աղքա-
տութեան և հոգսերի գեթսեմանին, կարող
է լինել երկարատեւ և ծանր հիւանդութեան
գեթսեմանին, կարող է լինել հրաժեշտի
գեթսեմանին՝ այն մարդկանց մահուան ան-
կողմի շուրջը, որոնց սիրում ենք. կարող է
այդ լինել խղճահարութեան Գեթսեմանին և
մեղքերից յուսահատութեան՝ որ չէ թէ չը-
գործել չենք կամենում այլ առարկում ենք
թէ չենք կարող: Բայց, եղբայրներ, Գեթսե-
մանիի փորձութեան այս ժամուն, այս մին-
չև իսկ մեղքերից տանջուելու այս ժամուն,
ոչ միայն հրեշտակ, այլ նոյն ինքն Յիսուս որ
մեր մեղքերի ամբողջ ծանրութիւնը կրեց,
կը հասնի զօրացնելու և մխիթարելու մեզ,
եթէ մենք հայցենք նորան: Նա մեր օգնա-
կանը կը լինի, եթէ տագնապի մէջ աղօթենք:
Նա կարող է կարեկցել և կարեկցում է մեր
տկարութեանը. Նա էլ, ըմպեց չարչարանքի
բաժակը, Նա էլ ընկած տարածուած էր գի-
շերը երեսնիվար գետնի վրայ, և այն մխի-
թարութիւնը, որ այն պահուն նորան տըր-
ուեցաւ, Նա և մեղ կտակեց, այսինքն մխի-
թարութիւն, օգնութիւն, խաղաղութիւն, բը-
ժըշկութիւն, լոյս, յոյս, հաւատ, պաշտպանող
ձեռք, աղօթքի առողջարար բժշկականութիւն:
Իսկապէս աղօթքը մի բնական մխիթարու-
թիւն է, այնպիսի մխիթարութիւն, որին քը-
րիստոնեան ակամայից ձգտում է: Երբ ջրերի
հոսանքը հեղեղում է մեզ, երբ թուում է թէ
աստուածային բոլոր ալիքներն ու սպառնա-
լիքները թափուում են մեր հոգու վերայ,
երբ գոգաղբութիւնը հեղեղի նման իւր ջը-
րերովը ծածկում է մեր յանցանքները —
այնպէս որ մեղքը թագնուում է վշտի մէջ,
ոչ, այն ժամանակ, եթէ մենք հոգեկան
կեանքը իսպառ չենք հանգցրել մեր մէջ, ինչ
կարող ենք անել, բայց եթէ ծնկաջոք խոնարհ-
ուել երկրաւոր բեմի այն մեծ սանդուխքի
առաջ, որ աներեւութապէս գէպի Աստուած
է տանում: Այն, տագնապի մէջ եղած՝ ժո-
մանակ մենք աղօթում ենք և աղօթքով ամէն
տեսակ ցաւի բժշկութիւն ենք գտնում:

Աստուծոյ մեծ գթութիւնը և նորա սէ-
րը գէպի մեղ երեւում է նորանում, որ մենք

կարող ենք վշտի բուռն Նորան գիմել նոյն իսկ եթէ առաջ երբէք գիմած չլինինք: Եթէ աղօթքը մատչելի լինէր միայն այն մարդկանց, որոնք միշտ բարի և միշտ հաւատարիմ են, նոցա որոնք երբէք հաւատուրաց չեն եղել և Աստուած չեն մոռացել: — Եթէ նա անհր- նարին լինէր մեղաւորների, զղջացողների և առհասարակ նոցա համար, որոնք շեղուել են ճշմարիտ ճանապարհից, ո՛հ, որչափ աւելի փոքր պէտք է լինէր Նորա նշանակութիւնը: Բայց մեր Աստուածը սիրոյ և գթութեան Աստուած է. Նա ամենաբարի է գէպի մեզ. վհատուած, հիասթափուած հոգին, որ ոչինչ չունի Նորան մատուցանելու բացի վատ ան- ցուցած կեանքի մնացորդներից, կարող է դառ- նալ գէպի Նա, կարող է մերձենալ Նորան, այն խեղճ, յոգնած, չարատանջ, և ցնցոտի- ների մէջ սառած ող անառակ որդու նման. գթութեան դուռը բաց է և այդպիսի հոգու համար, եթէ միայն գէպի Նա դառնայ. գեռ մինչ մենք հեռու ենք, մեր Հայրը կը գիմա- ւորէ մեզ, կենքէ և կը հանգստացնէ: Եւ ի՞նչ փոփոխութիւն կը լինի այն ժամանակ մեր կեանքի մէջ... Դուք տեսնում էք եր- կինքը ծածկուած կապարի նման, մոխրագոյն ծանր ամպերով. դուք տեսնում էք անհայ ձիւնի կոյտերի տակ սառած, անմխիթար մի երկիր՝ բայց թող ծագէ և փայլի արեւը, և ահա երկինքը նորից իւր ջինջ կապոյտ գոյնն է ստանում և դաշտերը ժպտում են մեր երեսին դալարագեղ կանաչներով և փայլուն ծաղիկներով. նոյնը կը պատահի և հիւժեւալ ու վատնեալ կեանքի հետ, երբ մենք գիմենք Աստուծուն և թոյլ տանք Նորա լուսոյ պայ- ծառ ճառագայթներին մեր սրտի մէջ թա- փանցելու: Սրանով չեմ կամենում ասել, թէ մեզ ճշող տանջանքը կամ վիշտը ան- պատճառ կը վերջանան, բայց մեր հոգուն խաղաղութիւն կը տիրէ, ոյժ, հնազանդու- թիւն և յոյս երեւան կը գան, և ընդունակ կը զգանք մենք մեզ տանելու այն ամէնը, ինչ որ Աստուած կը զրկէ մեզ. մինչև իսկ եթէ Նա հարուածէ մեզ՝ այնուամենայնիւ մենք կորոնենք Նորան և մինչև իսկ եթէ թուի, որ տրամութեան մռայլ ամպերը ծած- կում են մեզինց Նորա գէմքը՝ այն ամպերի մէջ ևս կը փայլի ծիածանը:

Բայց մի կարծէք, եղբայրներ, թէ որով- հետև Աստուած մեղաւորի կամ տանջուողի աղօթքը երբէք չի մերժի մենք պէտք է շա- րունակենք մեղանջել այն յուսով, թէ երբ տանջուենք, կապալխարենք, այդ կը նշանա- կէր, ամօթալի կերպով ի չար գործածել աստ-

ուածային գթութիւնն ու բարութիւնը. այդ այնպիսի մի կարծիք կը լինէր, որի դէմ պէտք է ամենայն համարձակութեամբ ասել, թէ տանջանքը ոչ ամէն ժամանակ գէպի ա- ղօթք կը տանէ մարդուն, թէ նա հանդէս կը գայ և այն ժամանակ երբ աղօթքն ար- գէն անհնարին է դարձել վաղուց ի վեր բը- թացած, առանց աղօթքի ապրող հոգու հա- մար: Ես աւելի բնորոշայն յոյս չեմ ճանա- չում քան մահամերձ զղջացողի յոյսը, զղջու- մըն մահուան անկողնումն: Այն մարդիկ, ո- րոնք շատերի մահուան անկողնի մօտ եղել են, ձեզ կ'ասեն, թէ ինչո՞ւ է ընդունայն այդ- պիսի յոյսը: Բայց աղօթքը, եղբայրներ, Աս- տուծանց մեզ տուած այդ իրաւունքը տես- նել ու ճանաչել Նորան, Նորա վերայ յոյսը գնել՝ շնորհուած է մեզ ոչ թէ միայն մահ- ուան ժամու, կամ տանջանքի ժամերու հա- մար, այլ ամբողջ կեանքի համար, գրեթէ օ- րօրացից մինչև գերեզման: Եւ անգին է ա- ղօթքի պարգևը, ինչպէս նորա համար, որ Նա մեղմացնում է տրամութիւնը, այնպէս և ոչ պակաս նորա համար, որ Նա ոյժ է տալիս ամէն մի անմեղ ուրախութեան: Ով որ կա- մենար ապրել իսկական կեանքով, աղօթքը նորան պէտք է ինչպէս գթալուծութեան, նոյն- պէս և բաղդաւորութեան, ինչպէս խաղաղու- թեան՝ նոյնպէս և հոգսերի միջոցին, երիտա- սարգական օրերում՝ ինչպէս և ծերութեան մէջ զօրավիգ լինէր: Այս բանումն էլ մեր օրի- նակը Քրիստոսն է. Նա ապրեց, ինչպէս և մենք ապրել կարող ենք՝ ի յոյս երեսաց Հօր Իւրոյ: Աղօթքը կենդանացնում էր Նորա հոգին, ոչ միայն իբրև տրամեալի, ոչ միայն լուսնի լու- սով հեղեղուած այգում, ուր տեղի ունեցաւ Նորա մահուան տագնապը, այլ յաճախ շատ յաճախ ամէն օր՝ այն Գալիլեայի փոք- րիկ գիւղի մէջ անցրած, անձանօթ տարի- ների ընթացքում, մանկութիւնից ի վեր, խաղաղութեան քաղցր ժամերին՝ ծնկաջոք լեռների շուշանների մէջ կամ խրճիթի յա- տակի վերայ: Այս աղօթքները հոգու համար նոյնն են, ինչ որ երկնքի ցօղը դաշտերի ծաղիկների համար. ցրեկուայ կիզող հողմը կարող է շօշափել նոցա և թերթերը կը գա- լարուին և կը գունատուին, բայց երկկոյեան երբ իջնի ցօղը, նոքա կը կենդանանան: Արդ՝ բարեաց այս առատ ցօղը ինչո՞ւ չթափուի և այժմ՝ և ամէն ժամանակ, մեզ ամենիս հա- մար, մեր կենաց դաշտի վերայ: Այն կեան- քը, որ խկղբանէ անտի աղօթքի կեանք է եղել, մանկութեան օրերից սկսած գիտակ- ցաբար գէպի իւր Հայրն Աստուծոն է ուղ-

դուռն՝ միշտ երջանիկ կեանք կը լինի: Ժամանակը կարող է սահել անցնել և երիտասարդութիւնը թառամել և ի հարկէ մէկը կը սահի և միւսը կը թառամի: Այդ կեանքի ճանապարհի վերայ ևս փոթորիկ կարող է բարձրանալ և արեւ փայլել, այնուամենայնիւ, նա անշուշտ երջանիկ կեանք կը լինի, այն երջանկութեամբ, որի համար մահ չկայ: Ահա թէ ինչ կը ցանկայի ես, որ ամէնքս սովորէինք, երբ մեր մտածմունքի աւարկան է Քրիստոս Գեթսեմանի պարտիզում: Հասկանայինք, որ աղօթքը կարող է արեւի ծառագայթները դարձնել նոյն իսկ գէպի մը: Եւ ևս սառած սիրտը, հասկանայինք թէ երկար, յարատեւ ձմեռ, անընդհատ գիշեր չը կայ այն հոգու համար, որի վերայ ծագել է ճշմարտութեան Արեգակը և ծաւալել իւր բժշկարար ճառագայթները: Եւ այս այն պատճառով, եղբայրներ, որ ճշմարիտ աղօթքը միշտ լսելի է լինում... Յիւրաւի կան այլ աղօթքներ, այնքան հակառակ Աստուծոյ կամ: Քին, այնքան անհամապատասխան մարդու իսկական կարիքներին, որ մեզ համար ամէնից լաւն այն է, որ Աստուած չանսայ նոցա, որոմմութեամբ չը լսէ նոցա: Այդ իսկ պատճառով, եթէ մենք աղօթում ենք երկրաւոր բարեաց համար, պիտի աղօթենք միայն պայմանաւոր կերպով «եթէ Աստուծոյ կամքն է», «եթէ մեր բարձրագոյն օգտի համար է», իսկ բոլոր լուսագոյն բաների համար մենք կարող ենք աղօթել համարձակ, անպայման կերպով և համոզուած, թէ ինչ որ խնդրենք կը տայ մեզ, Նոցա մասին խնդրելիս մինչև անգամ կարող ենք նախապէս գիտենալ որ կստանանք, որովհետեւ ինչ որ ցանկանում ենք, այն էլ խնդրում ենք և ինչ որ խնդրում ենք, նորան էլ ձգտում ենք, և ինչի որ ձգտում ենք՝ նորան էլ հասնում ենք: Գեռ չի եղել մի մարդ, որի աղօթքը լսելի եղած չը լինի կամ լիովին լսելի եղած չը լինի, եթէ միայն նա խնդրել է, որ օրըստօրէ աւելի լաւ, բարի, մաքուր լինի որ իւր միտքն ու հոգին բարձրանան գէպի վեր, գէպի երկնային բաները: Եթէ նա աղօթել է, որ իւր հոգուց արմատախիլ լինի առեւտրութեան, հպարտութեան, սրտմտութեան, աշխարհասիրութեան չարիքը, եւ այդ գէպքում ուրիշ պարզեւնորի հետ մէկ տեղ Աստուած պարգեւում է մեզ նաեւ իրեն, միջոց է տալիս մեզ իրեն ճանաչելու, սիրելու և տպրելու իրենով... Եւ երբ մեր բոլոր անգույն ձգտումները տողորուած են միայն մի ցանկութեամբ, այն է տեսնել Աստուծուն, երբ մեզ համար երկնքումը նորա-

նից դատ ոչ որ չկայ, և ոչ որ երկրի վերայ, որին աւելի մերը համարէինք քան Նորան, այն ժամանակ յիշաւի մենք երջանիկ կը լինինք այն երջանկութեամբ, որ պղտորել կարող չէ չարութիւնը, որովհետեւ այն ժամանակ մենք միայն ամէն ինչ պարփակող ցանկութիւն կունենանք, իսկ այդ ցանկութեան կատարումը մերժուել չի կարող: Եւ աւելի անսպասելի է մերժումն այն գէպքում երբ Աստուծուն հաճելի է եղել որ և է միշտ առաքել մեզ. «Դուք այժմ տրամութիւն ունիք, այլ դարձեալ տեսից դձեզ և ուրախ լիցին սիրտք ձեր և զօրախութիւն ձեր ոչ-որ հանիցէ ի ձէնջ»: Այո, երբ Աստուծոյ որդիք կանցնեն Գողգոթայի խաչի ստուերի տակից, այն ժամանակ կիմանան որ այդ բոտուերովն է ընկնում իրենց ճանապարհը գէպի լուսոյ մեծ Աթոռը, Նոցա համար Գեթսեմանին դրախտ է, որ Աստուած լեցրել է սրբազան պատկերներով, որի խորհրդաւոր լուծութիւնը բնդհատուում է բերկրալից աւետեաց ձայներով, որի սոսկալի խաւարը մեղմացած է և լուսաւորուած երկնաւոր գէպքերի փայլով և հրեշտակային թւերի սաւառնելովն:

Թարգմ. Պատրիկ.



ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՂԵՏՈՒԹԵԱՆ
ՍԿԻՋԲԸ.

Մեր ունեցած բոլոր տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ առաջին և երկրորդ դարերում քրիստոնեաները առանձին ժողովարաններ չունէին, այլ ս. հաղորդութեան խորհուրդը կատարելու և միաբան աղօթելու համար մասնաւոր տներում էին ժողովուում (Գործք Առ. 21, 46, Հռոմ. 16, 5 Ա. Կորնթ. 16, 19)։ Այն կարծիքը, թէ կատակոմենները կամ ստորերկրայ գերեզմանատները չէին ժամանակ իբրեւ աղօթատեղիներ են ծառայել, հեքքուած պէտք է համարել նորագոյն հնագիտական հետազոտութեանց շնորհիւ։ Երկար նեղ անցքեր են դռքաւ որոնք տանում են գէպի քառակուսի փոքր խցիկներ, իսկ այդտեղ գտնուում են նահատակների կամ պատուաւոր եկեղեցականների և ընտանիքների շիրիմներ։ Հատ հաւանական է, որ հանգուցեալի ազգականները կամ յարգողները երբեմն հաւաքուում էին այդտեղ ծիրոյ պաշտօն մատուցանելու համար, բայց նոքա այնքան փոքր են, որ շատ մարդիկ տեղաւորել և ուրեմն ամբողջ հասարակութեան համար աղօթատեղի լինել չէին կարող։ Այդպիսի ա-